27.04.2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ԳԵՎՈՐԳ ԱՐՄԵՆԱԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՑ

Իրազեկում

(հանրային հավաք և երթ անցկացնելու մասին)

Պարոն Ավինյան,

ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին » ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ 2026 թվականի մայիսի 1-ին անկացնելու եմ հանրային հավաք և երթ Երևան քաղաքում՝ հանդես գալով որպես հավաքի և երթի կազմակերպիչ ու ղեկավար: Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով իրազեկման ներկայացվող պահանջների մասով հետևյալ տեղեկությունը՝

1. Հանրային հավաք անցկացման վայր՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աբովյան փողոցում գտնվող «Կինոմոսկվա» կինոթատրոնի հարակից հրապարակ (Շառլ Ազնավուրի հրապարակ):
2. Հավաքի անցկացման սկիզբ և ավարտ՝ 2026 թվականի մայիսի 1՝ ժամը 12:00 – 2026 թվականի մայիսի 1՝ ժամը 18:00:
3. Հավաքի նպատակ՝ Հայաստանի Հանրապետության ներքաղաքական հարցերի քննարկում:
4. Հավաքի մասնակիցների սպասվող թիվը՝ 1000 մարդ:
5. Հավաքի ընթացքում օգտագործվելու են բարձրախոսներ, դրոշներ, ձայնի ուժեղարարներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխներ և այլ սարքավորումներ: Հավաքի և երթի ընթացքում օգտագործվելու է նաև Պիկապ ավտոմեքենա՝ ձայնի ուժեղարարներով:
6. Հավաքի ընթացքում անցկացվելու է նաև երթ՝ սկսած 13:00-ից մինչև 17:00՝ հետևյալ ուղղությամբ՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի «Կինոմոսկվա» կինոթատրոնի հարակից հրապարակ – Աբովյան փողոց – Հանրապետության հրապարակ – Ամիրյան փողոց – Մաշտոցի պողոտա – Ֆրանսիայի հրապարակ –

Սայաթ Նովա պողոտա – Աբովյան փողոց – վերադարձ հանրային հավաքի անցկացման վայր:

7. Հավաքին կարգադրիչներ չեն լինելու:

8. Գևորգ Արմենակի Ստեփանյանի՝ որպես հավաքի կազմակերպչի և ղեկավարի տվյալները [redacted]

Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝

1. ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը,
2. սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով,
3. սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից ներկայացնում եմ՝

1. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Հանրային հավաքի
կազմակերպիչ և ղեկավար
Գևորգ Արմենակի Ստեփանյան